

ՊԱՅՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Տարեկան 12 ֆր.
Վեցամսեայ 6 «

ՍՐՏԱՍՈՒՆՄԱՆ
2 քիւ մէկ ծրարով
Տարեկան 14 ֆր.
Վեցամսեայ 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տղ.
Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

Մանուցման տղը
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

902

20.3.92

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

„Iravounk“

V A R N A (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ
չին տուիր

ԻՅԻՒԹԷ ՄՕՏ ԸԼԼԱՐ

Եթէ մարդու համար՝ ամեն անուշ, ամեն հաճելի բանն է, իր պարտականութեան խղճամիտ գործադրութիւնը կեանքի բազմակնճիւռ ընթացքին մէջ, ինչ ըսել անոնց, որ այդ պարտականութեան գործադրութեան պատրուակին տակ, առերեւութական սուտ սրբացումներով կոտնկոխեն բոլոր նուիրականութիւնը անոր և հետեւաբար մարդկային ամեն արժանապատուութեան:

Ինչ ըսել քահանային, որ միստիք ու երկնախօսիկ մեղեդիներու չգիտեմ որպիսի սփոփարար հառաչանքներէ անմիջապէս վերջ, իր գործնական կեանքին մէջ կը քալէ անպատկառօրէն սուտի ու կեղծաւորութեան ճանքան, այնպիսի յիմար թափով մը, որ իսկապէս կանճրկէ քեզ վճռելու թէ ասի. կայ քահանայ է թէ սատանայ:

Ինչ ըսել վարժապետին, որ մարդ պատրաստելու գերազանցօրէն պսեմ պաշտօնին մէջ, իսկապէս մարդոց բարոյական մեքենաները կը խանգարէ ու իր ոճրագործ ձեռքով կը դրօշմէ յաւիտեանական արատը խեղճ մանուկին ճակատին, որ բնականաբար իրեն հետ կը մեծցնէ իր ժառանգած մոլութիւնները՝ անտիական հասակէն:

Ինչ ըսել խմբագրին, որ միտքեր պատրաստելու մեծագոյն գործին մէջ, միտքեր կը մոլորեցնէ անպատիժ կերպով ու ծափը կընդունի հացկատակներուն, որ զինք կը շրջապատեն խորունկ անհասկացողութեամբ:

Հացկատակ ըսի, ու միտքս ինչպէս: Դեռ մօտիկ օրեր, փսխունքներու վազքին մէջ, զոր առաջնորդող անուանելու միամտութիւնը ունին ապուշներ, փռնգտացող խմբագիր մը բոյսերու մէջ կը տեսնէր դասակարգ մը, որուն կը հաճէր փոխանակ մակարոյժի, խացկատակ մակերիւր տալ ածականօրէն և քառասուիք բառը թարգմանաբար սպաննել իր մտքի անհուն պարապութեանը շնորհիւ...

Ու սպասել, որ այդ հիւժախ-

տաւոր մտքի չարչրկումներուն արդիւնքն եղող փսխունքները ըլլան մեր վերքերուն բալասան... ով ապուշութեանս:

Ինչ ըսել այն գրողներուն, որոնք գրչի կոթուծայրին ուր ըլլալը անգամ չգիտնալով հանգերձ, կուգեն անպատճառ բան մը ըսել ու խմբագրէին խառնուիլ: Ինչ ըսել, որ ինքնաճանաչութեան աւանտարարական պարկեշտութիւնն անգամ անտեսելով, արամազդի գառ պատգամներ կորոտան աւանք, միշտ՝ սակայն, անարձագանք մնալու արհամարհանքին դատապարտուած, խորունկ կերպով:

Ինչ ըսել կրիային, որ ցուամարտներու կրկէսին մէջ կուր կը յայտարարէ ու քահանայներու անվիրջ տուրափին կը մատնուի, իր կճեպբանտին մէջ իսկապէս ծաղրանք շարժող ծուռ ու մուռ ոգորումներով:

Ինչ ըսել յեղափոխականին, որ հայ ու հայրենիք կը քարոզէ, անձնազոհութեան գոտական ամեն բանաձեւերը գոց ըրած, սանկ ընել պէտք է, նանկ ընել պէտք է կրտէ ու ինք արտասահման սրճարանի մը անկիւնը շնթկած, կը պահանջէ խեղճ բռնակիրներէն, որ զինք ապրեցնեն երկար տարիներ: Եթէ հնար է, մինչեւ գերեզման:

Այս տխուր երեւոյթներուն պատճառը պէտք է փնտռենք ուղղակի մեր ժողովուրդին ագիտութեանը և հետեւաբար դարմանն ալ պէտք է փնտռենք անոր զարգացման մէջ: Պիտի գայ օր մը՝ ուր ժողովուրդը պիտի պոռայ քահանային երեսին «ընթացքդ խօսքիդ յարմարցուր» աղտոտ վարժապետին թէ «տաճկական վեց դիրն է քու արժանաւոր վարձքդ» ցոլած խմբագրին թէ «սուս եղիր»:

Ու այդ օրը ապահովապէս պիտի ըլլայ ազգային երջանկութեան դարապաշտը, որ ինքնաճանաչութեան գեղեցիկ ընդվզումով մը պիտի աւլէ սրբէ բոլոր մակարոյժները հրապարակէն:

Իցիւ թէ մօտ ըլլար անիկա: ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

ՄԱԿԵՒՆԱՅԻՈՅ ԾՐԱԴԻՐ

Մակեդոնական կազմակերպութեան սովորական երկրորդ համաժողովին կողմէ Պերլինի դաշնագիրը ստորագրող եւրոպական պետութեանց 1898ին հաղորդուած ծրագրին բովանդակութիւնը հետեւեալն է.

1. Կազմութիւն նահանգի մը, իբր կեդրոն ունենալով Սէլանիկը, Սէլանիկ: Մանասթըր ու իւսկիւլ վիլայէթներուն հետ:

2. Հինգ տարուան համար ուղղամիտ ու արդարադատ անձնաւորութեան մը ընդհանուր կառավարիչ անուանումը, նահանգին մէջ մեծամասնութիւն ունեցող ազգէն:

3. Ժողովուրդէն ընտրուած ներկայացուցիչներէ կազմուած ժողովի մը օժանդակութեամբ ընդհանուր կառավարիչը նահանգը պիտի վարէ, փոքրամասնութեան իրաւունքը երաշխաւորելով: Այդ ժողովը իրաւունք պիտի ունենայ նահանգին ներքին վարչութեան վերաբերող բոլոր խնդիրները տնօրինելու:

4. Ազգու ու բաւականաչափ երաշխաւորութիւն անխտիր նահանգին բոլոր բնակիչներուն անձնական ազատութեանը ու բնակավայրերուն անընդաւարելիութեանը համար: Մամուլի գրաքննութեան ջնջում:

5. Բոլոր պաշտօնեաները բնակչութեան մեծամասնութեան անուանել: Ընդհանուր կառավարչին առաջարկութեանը վրայ, վերին պաշտօնատարները Սուլթանը պիտի անուանէ, միւսները ուղղակի ընդհանուր կառավարչէն պիտի կարգուին:

6. Նահանգին բոլոր հաստատութեանց մէջ, թրքերէնի համահաւասար գործածել միւս գըլխաւոր լեզուներէն մին, զոր վարչական համայնքները ազատ ըլլան ընտրել իրենց պաշտօնական յարաբերութեանց համար:

7. Քրիստոնեայ զանազան ազգերը իրենք միայն իրենց դեպրոցները պիտի կազմակերպեն, ու կառավարութիւնը կամ նահանգին մէկ ուրիշ մարմինը միջամտու-

թեան ոչ մէկ իրանունք պիտի ունենայ:

8. Ընդհանուր կարգապահութեան ու ապահովութեան համար նահանգին մէջէն ժողովուած քաղաքապահ զինուորութեան մը հաստատութիւնը:

Այս զինուորութիւնը ուղղակի ընդհանուր կառավարչին հրամանին տակ պիտի գտնուի: Այս զինուորներու ամբողջութիւնը պիտի բաղկանայ զանազան ազգութեան թիւին համեմատութեամբ, առաւելելն 10 0/0 արական բնակչութեան ամբողջութեան: Ընդհանուր կառավարչին առաջարկութեամբ, գլխաւոր սպաները Սուլթանէն պիտի անուանուին: միւսները ուղղակի ընդհանուր կառավարչէն:

9. Ընդհանուր ժողովոյ կողմէ նահանգին տուրքերուն ու պիւտժէին սահմանումը, հասոյթներէն 25 0/0 պետութեան ընդհանուր գանձին պիտի յատկացուի, կայսրութեան պէտքերուն համար: մնացածը նահանգին պէտքերուն պիտի գործածուի:

10. Ընդհանուր կառավարչին անուանումին հետ, յանձնաժողովի մը ալ անուանումը, ուր բնիկ տարրը ներկայացուցիչներ ունենայ և որ, ընդհանուր կառավարչին նախագահութեամբ, պատրաստէ գործադրուելիք բարենորոգմանց մանրամասն ծրագիրը:

11. Ընդհանուր ներում քաղաքական բոլոր բանտարկեալներու ու բոլոր գաղթականներու:

ՆՊՍՍ ԿԱՐՆՈՅ ԱՐԿԱՄԵԼՈՑ

Կարնոյ արկածելոց ինպստ Սլիվէնի Պատ. Աղքատախնամ ընկելութենէ ստացանք Տ. Գոչունեանի ձեռամբ 40 ֆր ոսկի, ու գրեցինք Կարին որ այդ գումարը վճարուի երկրաշարժի հայ կարօտելոց Յանձնաժողովին:

Գ. ՍԱՀԱԹՅԱՆ

Վառնա 5 Մարտ

ԱՆՔՈՒՄՈՒԹԵԱՆ ԴԵՄ

«Այնպէս մեր օրերու մէջ
աւելի աւերումներ կը գործ-
են, քան թէ սա երեք պատ-
մանական աղիւսները՝ հոյժը,
ժաւնախոսը եւ պատերազմը:
Այնպէս՝ սովի եւ ժաւնախո-
սի աւելի կը կոտորէ, պա-
տերազմի աւելի կը սպան-
նէ: Ասանկեղէն աւելի կը
քրտնէ:»

ՎԼԱՍՏՈՐ

«Այնպէս ոչ առողջութիւն
կուսայ, ոչ ոյժ, ոչ տա-
րաքան, ոչ ուրախութիւն,
այլ միայն չարիք՝ կը պատ-
ճառէ: Ասկէ խելացի եւ բա-
րեկիւր մարդ պատահուի
ոչ միայն ինքի չարածան-
դակից բնականներ, այլեւ
իր բոլոր ուժովը ուրիշներ
ալ հեռացնել այս թոյնէն:»

ԼԷՕՆ ԴՕԼՈՒՅՈՅ

Արդէն մեր ընթերցողաց տեղե-
կացուցած էինք Պարսկաստանի
մէջ հակալքութեան ընկերութիւն
մը կազմուած ըլլալը: Վերջերս
ստացանք այդ ընկերութեան առա-
ջին հրատարակութիւնը, «Մարդ-
կութեան ամենամեծ թշնամին»
անունով տետրակ մը, որ բազմա-
թիւ փաստեր եւ օրինակներ մէջ
տեղ կը բերէ ոգելից ըմպելիներու
գործածութեան փաստակարարութիւնը
եւ աղետալի հետեւանքները թուող,
ու կը յիշէ անոր գէժ աշխարհի
ալիւսալ մասերուն մէջ ձեռք առ-
նուած միջոցները ու կազմակեր-
պուած շատ մը ընկերութիւններ:
Այդ տետրակը կազմած է Տօթ-
կ. Յ. փաշայեան, որ նոյն ընկե-
րութեան նախագահն է, եւ կը
խնդրէ հայ թերթերէ այդ հրա-
տարակութիւնէն արտատպումներ
եւ քաղուածներ ընել: Մենք նպա-
տակին օգտակարութիւնը ըմբռ-
նած ըլլալով, առայժմ կարտա-
տպենք այդ ընկերութեան անգա-
մակցելու հետեւեալ կանոնադրու-
թիւնը:

Ա. ԵՐԱՏԱՆԵԱՆ (1)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՎԱՆԱԿԱՆ...

Աշնան գիշեր մըն էր:

Երկինքը ամպ չկար: Աստղերը օր-
գոյն պլպլացումով մը կը ցոլային:
Խոր լուսնին մը կը տիրէր:

Այդ պահուն, Վարազդայ ժեռուտ եւ
սեպածեւ լեռան մէջէն բարձրահասակ
ու յաղթանդամ մարդ մը, երկայն ու
թխադոյն հապայով մը ծածկուած, ա-
րագ արագ յառաջանալով վանքին ըն-
դարձակ ու գեղեցիկ ծառաստանը
մտաւ:

Երբոր վանքին հոգաբարձու հրա-
շալի դմբթը նշմարելու չափ մօտե-

ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. Խոստանում ենք մեր կենաց տե-
ւողութեան ընթացքում բնաւ երբեք
աշխարհ պարունակող որ եւ է ըմպելիք
չը խմել:

2. Մեր հիւրերին, ծանօթներին,
բարեկամներին եւ ազգականներին,
թէ մեր տներում եւ թէ այլ վայրե-
րում բնաւ երբեք աշխարհ պարունակող
ըմպելիներ չի մատակարարել:

3. Համոզել ուրիշներին, որ ընկե-
րութեան անդամակցելն:

4. Անկուսականութեան չարիքները
եւ նրա տարածումը արգելելու հա-
մար պրոպագանդա անել, թէ խօսքով
թէ յօդուածներով եւ թէ աշխարհի գե-
ժառոտ գրքեր ու բրոշիւրներ հասա-
րակութեան մէջ ձրիաբար տարածե-
լով:

5. Որքան կարելի է ջանալ համո-
զելու մեր ծնողներին, բարեկամնե-
րին եւ ծանօթներին որ տներում գի-
շի, արող եւ մաստիկ չպատրաստեն
եւ ուրիշ ոգելից ըմպելիներ՝ ինչպէս
կոնեակ, բոմ, գարեջուր, գանազան
լիքներ, եւ այլն չմտցնել իրանց
տներում:

6. Համոզել հասարակութիւնը, որ
հարսնիքներում, տոններում երկույթ-
ներում, անուան տարեդարձներում,
թատրոններում եւ այլ հասարակական
վայրերում աշխարհ պարունակող որ
եւ է ըմպելի չը մատակարարեն եւ
չը վաճառեն:

7. Ստիպել կրթական գործիչներին
որ դպրոցներում աշխարհ վնասները ա-
շխարհներին բացատրեն եւ նրանց
մէջ կազմեն հակալքութեան ընկերու-
թիւններ:

8. Ինչու երբեք մեր խոստումը չըբժել,
եթէ դրսեւոր լինելը, ընկերութիւնը
իրաւունք կունենայ սեզ ընկերու-
թիւնից արտաքսելու եւ ամէն ընկե-
րական ու բարեկամական յարաբերու-
թիւն դադարեցնելու:

9. Առանձին պարտականութիւն
համարել անդամներին վրայ փոխադարձ
հսկողութիւն ի գործ դնել եւ խոստո-
նադրութեան անդամներին անուանները վար-
չութեան հաշուողն:

10. Հակալքութեան գրքեր եւ բրո-
շիւրներ հրատարակելու եւ հասարա-
կութեան մէջ ձրիաբար տարածելու
համար հասոյթի միջոցներ հայթայ-
թել, առանց անդամավաճար նշանա-
կելու, միայն կամուր շուէրներ
ընդունել:

ցաւ, զրիթէ երկիւղալի զգուշու-
թեամբ մը սէկիլի շեւեղ հապան ու
ծուռեկի եկաւ:

— Մնա՛ւ-բարով, իմ պաշտելի Մե-
նաստա՛ն, մնա՛ւ-բարով... հառա-
չեց երիտասարդը խղճում ձայնով
մը: Ա՛լ կը բաժնուիմ քեռէ՛... կը
բաժնուիմ քու հոգեյոյզ ու երկնային
մեղեդիներէդ... Բայց երբէ՛ք չպիտի
մոռնամ քեզ...:

Ու մեքենաբար հոգի եղնելով,
սրբեց աչքերու արցունքները, ծած-
կուեցաւ իր լայն հապային մէջ եւ
ղէպի վանայ Այգեօստանը ուղղուե-
ցաւ:

Կէս դիշերուան մօտ, երիտասարդը
վանայ Հայկավանք կոչուած փողոցին
մէջ կանգ առաւ եւ դուռի մը զարկաւ:
Երկիւղալի կերպով մը:

Դուռը բացուեցաւ:

Սեմին վրայ երեւցաւ ծերունի մարդ
մը, որ վաթսուին անցած, բարեմիտ
կերպարանքով ու ալեխառն մաղերով
էր:

— Ո՛վ կուզես... հարցուց ծերու-

ՇԱԲԼԹՈՒԹՆ ՆՕԹԵՐ

Լրքութեան զագարակեցին. — Սըր-
աշարժ ֆերրուած մը եւ սարսաղ
Գեռն. — Թի ինչո՛ւ յեն պատասխանե՛ր:

Երբ մարդ կը մտածէ դանուութեամբ
թէ ո՞ր աստիճանի անտարբեր գար-
ձա՞ է ժողովուրդը զինքը շրջապատող
միջավայրին կեղտոտութեանց, գար-
մանալի չի թուի կարծես յանդգնու-
թիւնը կարգ մը լիբերալ, որոնք
օգտուելով իրենց հանդէպ թանձրա-
ցող արհամարհանքի եւ զգուշութիւն
ընթացիկ, ազատ ասպարէզ գտած
կը համարեն իրենց ներքինութիւնները
գուրս թափելու: Ինչն օր ամէն ժամ
կրկնուող լրբութիւններու այս զգու-
շութիւնը երեւոյթները, որ այլեւս սո-
վորութիւն մը դարձած են ժողովրդ-
ային համար, ալ փոխանակ զայրոյթի
խորին արհամարհանք եւ զգուշ-
կազդեան իրեն: Ի՞նչ կըլլայ արդիւնքը
ժողովուրդին բռնած այս տրամաբա-
նական ընթացքին: Երբ մէկ կողմէն
կեղտոտներու ժխտը զիմադրաւել
փորձող անձնաւորութիւնները ալ չի
կարողանալով տանիլ ստույթիւննե-
րու, խաբէութիւններու եւ հայհո-
յանքներու իրենց վրայ ազդած զգու-
շութեան, մէկիկ մէկիկ ընդ միշտ
թքնելով իրենց վերջնական թուրը
անոնց երեսին հետեւեալ կը հեռանան
բանակաւ ասպարէզէն, միւս կող-
մէն ցածերու այդ անարգ լէզէնը
օգտուելով առաջիններու վնասութե-
նէն եւ իրենց ստացած թուրով յաղ-
թանակած համարելով զիրենք, ա-
ռաջ կը վարեն իրենց ընթացքը զէ-
պի լրբութեան զագաթնակէտը, զէ-
պի զրչի պոռկուութեան արեւստիւն
կատարելագործումը:

Երբ գրչի պոռկուութիւն կըսեմ, ա-
ստով անկասկած վայրկեանապէս կը
պատկերանայ ձեր մտքին մէջ վառ-
նայի խայտառակութեան օրկանը եւ
զինքը վարող իշայած գլուխը, իր
շոշորդ խիղճուկրակ արքանականութե-
քառիքադիւրին հետ: Այդ խումբին
մէջ խիղճ մը կայ որ Այգեկութիւն եւ
ուրիշ ներթուր վրայ քանի մը շա-
րադրութիւններ հրատարակել տալէ
ետքը յիշեալ թերթին մէջ, հիմա
ուրիշ բաներ ալ կը գրէ կամ կը ստո-
րագրէ: Երկու երեք շաբաթ առաջ
իբր արտայայտութիւն Հ. Յ. Միու-

թեան իրենց վրայ ազդած տպաւո-
րութեան, «Դժգոհը» հասկնալի վեր-
նագրին տակ եւ «Մ» խղճալի ստորա-
գրութեամբ սրտաշարժ քերթում մը
հրատարակուեցաւ խայտառակաբեր
մէջ, որ անկասկած բաւական ար-
ցունքներ խլեց ընթերցողի աչքերէն:
Այդ յօդուածին մէջ խեղճ «Մ» խըն-
դալ փորձած էր ու ձայնը էջու մը
հետորակաւ հանդիսաւոր յանդէս
ստացած, երգիծել փորձած էր ու
ղէմը միմոսի մը ստուրկ եւ անարգ
ծամածուութիւններն էր հագած... Ի՞նչ
սրտաշարժ ողբերգական կացութիւն...
Յետոյ բարկու թեմէն մէկիկ մէկիկ
դուրս էր ժայթկած Միութիւնականնե-
րու հասցէին այն բոլոր անականները,
որով ժողովուրդը վաղուց արդէն
մկրտած էր զիրենք:

Բայց ասով խնդիրը չի վերջանար:
պէտք էր անդադրում հայհոյանքնե-
րով ստիպել Միութիւնականները որ
հրապարակ գան: Այսպիսի հայհո-
յանքներու հանդէպ Միութիւնական-
ներու պահած լուսնութիւնը շատե-
րու զարմանքին առարկան է դար-
ձած:

— Ինչո՞ւ իրենք զիրենք չեն պաշտ-
պաներ կրսն ումանք:

Կարծես մէկ կողմէն այս բացառիկ
գաւին հետաքրքրութիւնը աւելցնելու
(որովհետեւ ժողովրդին համար ամէն
բան պարզ ըլլալով այսպիսի հարցեր
չեն կրնար հետաքրքրել զինքը), միւս
կողմէ վալ զօր մոլեգնութեամբ «փաս-
տեր» փնտռելու ոչխարամիտ խափին
մահացու մղում մը տալու նպատակով,
Հ. Յ. Միութեան կարեւոր եւ անկա-
րեւոր անդամներէն եւ ոչ մէկը հրա-
պարակ կելլայ իր սկզբունքները իր
զաղափարները պաշտպանելու, նկա-
տելով որ եթէ աշխարհի վրայ ամե-
նէն զփուր բան մը կայ, ան ալ
խօսք չի հասկցողներուն խօսք հաս-
կցնելը եւ ներգամբնեւորու հետ բա-
նակաւ բռնուելն է: Ու ես լիովին
իրաւունք կուտամ իրենց, նոյնիսկ
այն պարագային երբ ժողովուրդին
միտքը ալ եւ ալ անարժէք սուտե-
րով եւ աղ սուտերով վրայ հիմնուած
եւ շոշորդ տրամաբանութիւններով
հրաշակերտուած առաջնորդող յօդ-
ուածներով նկրտին պղտորելու ժողո-
վուրդին միտքը: Ժողովուրդի աղնիւ
մասը վաղուց թքած է այդպիսիներու
երեսին եւ չուտով, խիստ չուտով

— Ո՞ր ելիքից էք, հարցուց:
— Պարսկաստանցի եմ, բարի հայր,
պատասխանեց երիտասարդը լեցուած
ձայնով մը: Եւ խորին շնորհակալու-
թիւնս կը յայտնեմ որ ինձի պէս դա-
րկա մարդու մը ձեռքը բռնեցիք:
— Ա՛խ, որդի՛ս, հառաչեց ծերու-
նին կակմանքով մը: Գիտցիր որ գըլ-
խիս վրայ տեղ ունիմ քեզի համար:
Ու չկրնալով իր հոգին լեցնող դառ-
նութիւնը զսպել, սկսաւ արտասու-
ելով:
— Ես էլ զարկալի տէր եմ, որդի՛ս,
յարեց ծերունին, արցունքները սրբե-
լով:
— Իրա՞ւ... ո՞ր կը գտնուի ձեր
զարկալը, նկատել տուաւ երիտա-
սարդը:
— Ի՞նչ գիտնամ... մեր պանդուխտ-
ները տեղ մը չունին... Պօլիս, Ռուս-
սաստան, Պարսկաստան, մէկ խօսքով
աշխարհիս ամեն կողմ ցրուած են ա-
նոնք:
— Շատ տա՛րի է երթալը, վրայ
բերաւ երիտասարդը:

Թերեւս, տալու է իր ջանքերը
հարուստը անոնց օժայիտ քաղցր
գլուխներուն...

ՄԵՂՈՒ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկայէ Անահիտի կը գրեն.
«Կը խորհեմ որ հրատարակեմ,
ի գիտութիւն Պ. Թոքոմիային
և ամեն հարուստ ազգայնոց ու
րոնք կուզեն բարեբարել իրենց
ազգին, թէ Ամերիկայի պատուա-
ւոր և բարձր քոլէճներէ մին,
Բարք-Ֆոլէճը, իր ներքին կա-
նոնաց համաձայն, պիտի կրնայ
անուցանել և կրթել 2000 ոսկիով
տասը ուր՝ փոխանակ երկուքի,
իսկ 200 ոսկիով մէկ որք. այս
քոլէճը առիթ կընծայէ նաեւ ու-
սանողին արհեստ մըն ալ սորվե-
լու:

Քոլէճին հասցէն է՝

Բարք-Ֆոլէճ, Բարքվիլ, Մօ.
(Մ. Նահանգ Ամերիկայի)

— Նոյն հանգէսին թէ հրանէ կը
հաղորդեն թէ նախաձեռնութեամբ
Պ. Տիգրան Զաւէնի, տեղւոյն
Հայերը որոշած են «Ժողովրդա-
կան Համալսարան մը հիմնել:

— Բոս Արմենիայի խմբագրա-
կան մասնախումբի անդամներէն
Մ. Մ. Ժորժ Քլէմանս և Յ. տր
Բրէսանսէ որոշեցին ընտրել ինք
կայանալ յառաջիկայ խորհրդարա-
նական ընտրութեանց, Զերմօրէն
փափաքելի է որ այս հայասէր
զոյգը յաջողի, որով փրանական
խորհրդարանին մէջ մեր դատը
չիրմապէս պաշտպանող երկու ա-
խոյաններ պիտի ունենանք:

— Հայ ազգին կողմէ Սուլթա-
նին շնորհակալութիւն յայտնող ու
ղերձը՝ զոր Օրմանեան պատրաս-
տած էր, չէ ստորագրուած. ու
րովհետեւ ուրբաթ օր կրօն. Ժա-
ղովոյ անգամները ներկայ չեն
գտնուած նիստին, թերեւս այդ
ուղերձը չստորագրելու համար:

— Այն, այս տասն եւ վեց տարի է
որ տունէս բաժնուած է, հառաչեց
ծերունին:

— Նամակ կը գրէ:

— Երկու անգամ նամակ գրած է:

Այսչափ:

— Տեղեկութիւն մըն ալ չտար:

— Ամենեւին Առաջ Պոլիս էր բայց
տարի մը ետքը չգիտցուի որ ո՛ւր եր-
թալը:

— Ի՞նչ ընես... մեր թշուառ Ազգին
ճակատագիրն է այդ, միմիջեց երի-
տասարդը խորին յուզմունքով մը
Թափառական եղած ենք ո՛չ թէ հի-
մակ, այլ հինգ երկար դարերէ ի վեր:
Բայց Աստուած ողորմած է, բարի
հայր, անիկա կը անսնէ մեր խեղ-
ճութիւնը:

Մերունին ալ չկրցաւ շարունակել
իր խօսքը: Դողդած ու իր սփոյն
ճակատը մութ ստուեր մը պատեց:

— Բնիկ Պարսկաստանցի՞ ես, միմիջեց
ծերունին ցաւատանջ ձայնով մը:

— Ո՛չ... բայց բաւական տարի ես
ղաւ որ այդ կողմերը կը գտնուէի:

Օրմանեան կերելայ թէ միայն
ներկայ Գաղ. Ժողովոյ անդամներէ
մէկ քանին ստորագրել տալով,
անցեալ շաբաթ իրիկուն փութացած
է կայս. պալատ և Ս. քորտուղար
Թահսին պէյին յանձնած է ու-
ղերձը, առանց անձամբ Սուլթա-
նին կրնալ ներկայանալու:

— Քեանդրիէ հեռագրուած է
Պատրիարքարան թէ երկրաշարժի
հետեւանօք եկեղեցին, դպրոցը
և տուներու մեծ մասը փլած են
ու ժողովուրդը չքաւոր վիճակի
մէջ է: Ուստի 2000 զրուշ զըր-
կուած է Պատրիարքարանէ:

— Շուվայի մէջ կատարուած
վարդանանց հանգէսին առթիւ
մեզ զըրկուած նկարագրութենէ մը
կը քաղենք հետեւեալը:

Կրթական տեսչի փոխանորդ Պր.
Պալքանսքի ուսուցչական խմբի
հրաւիրանօք բարեհաճած էր ներկայ
գտնուել այսպիսի դուռ ազգային հան-
գէսի մը: Պ. Պալքանսքի յայտնեց թէ՝
թէ եւ ինք հայերէն չհասկնար, բայց
ճառախօսներու շարժումներէն եւ փոք-
րիկներու վարդանի նկարը ցոյց տա-
լէն սաստիկ յուզուած է, մանաւանդ
տեսնելով մինչեւ իսկ այդ փոքրիկ-
ներու մէջ հայրենասիրութեան եւ հե-
րոսները յարգելու զգացումը: Կը յոր-
դորեմ ըսաւ ծնողները, որ վառ պա-
հեն այս հայրենասիրական զգացումը
իրենց զաւակներու սրտերուն մէջ, ու-
րոնք ապագային յաջորդներ պիտի
ըլլան իրենց այսօրուան ուսուցիչնե-
րուն: Քանի որ հայրենասիրական
զգացումը այս փոքրիկներու սրտերու
մէջ անգամ մըմտած ձգած է, անկա-
րելի է որ ձեր հայրենիքը մի օր չփր-
կուի: Եւ մօտ ապագայի մէջ ձեռք
ձեռքի տուած մենք պիտի տեսնենք
փրկուած Մակեդոնիան եւ Հայաս-
տանը: Ես ըսաւ, կրկին շնորհակա-
լութիւն կը յայտնեմ Պատ. ուսուցչա-
կան խմբին եւ հայ երիտասարդու-
թեան, որ այսպիսի վեհ եւ յուզիչ
հանգէս մը սարքած ու զիս ալ հրա-
ւիրելու պատիւն ըրած է:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Ձրանսերէնի եւ Գերմաներէնի հմուտ
երիտասարդ մը տրամադրի է այդ եր-
կու լեզուները սորվել ուղղորդելու,
գոհացողիչ պայմաններով, դասեր
տալ: Դիմել խմբագրութեանս:

պատասխանեց երիտասարդը:

— Հարկաւ գործի մը համար այս
կողմերն եկար, անանկ չէ:

— Այո՞... տեսնեմք թէ Աստուած
պիտի յաջողցնէ:

Ի՞նչ գործ կուզես ընել, Արհեստ
ունի՞ս:

— Իմ արհեստս զինագործութիւն է:

— Զինագործութիւն:

— Այո՞:

— Անկարելի է... այդ արհեստը
չես կրնար ընել մեր քաղքին մէջ:

— Ինչո՞ւ համար:

— Որովհետեւ արդիւրեւած է:

— Ըսել է թէ այս քաղքին մէջ զի-
նագործ չկայ:

— Ամենեւին, եթէ մէկ երկու խա-
նութներ կան, ատոնց մէջ դանակ,
զմելի եւ գրիթէ տնական առարկաներ
կը շինուին:

— Խիստ լաւ, եթէ զէնք մը շինել
հարկ ըլլայ, ի՞նչ կրնան:

— Հիմա... մ.մտած ծերունին: Ո՞վ
է զէնք գործածողը, որ զէնք շինելու
պէտքը զգացուի: Ո՛չ թէ շինելու ի-

ԱԶԴ

Նկատելով որ կարգ մը անհատ.
ներ անգիտակ կերեւին և թէ
թերեւս կարգացած չեն մեր Պատ.
գամաւորաց Ժողովի յայտարարու-
թիւնը որ ժամանակին հրատա-
րակուեցաւ իրաւունքի Զրդ թիւով,
ուստի աւելորդ չենք համարեր յայ-
տարարել թէ Միութեան Յանձնա-
խումբերու հետ բանակցել կամ
մեր հայեացքները իմանալ փափա-
գողներ պէտք է դիմեն հետեւե-
ալ հասցէին՝

Mr. V. Torkomian
L. S. B. (Poste restante)
Roustchouk
Հ. Յ. Միութեան Յանձնախումբ
Վանայի
(Կիւի)

ԿՍՄԻԹ

Վարդին. — Կը վստահեցնենք ձեզ
թէ Միութեան Մասնախումբերու զը-
րամը շատ ապահով ձեռքերու մէջ կը
գտնուի, եւ ոչ ոք անկէ 5 սանթիմ
կրնայ իրացնել: Բայց ձեզ համար
ցաւալի կէտը այն է թէ՝ որչափ որ
ալ փրկուի՝ անկէ ձեզ սանթիմ մը
խայծ չկայ:

— Տ. Ս. ին. — Զարեմ զբա-
ղել իր ստորագրած բառը չհասցող Յ.
Ուսուցչական անուն չլսաւորով, որ
խաչագողներու զբան ետին զետեղուած
չնշաւոր մեքենայ մըն է, զոր երբ լա-
րես, ի հաշիւ անոնց կը ճգայ: Այդպի-
սիներ ոչ թէ պատասխան այլ արհա-
մարհանք իսկ չեն արժեք:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ե. ՅՈՒՑԱԿ

Սոյիւնային

Փոխագրեալ ֆրանք 541.50
Տ. Տ. Յովհաննէս Մուրատ 1. Մաղո
Ուստուր 2. Գրիգոր Մանուկ 2.
Մուրատ Յովհաննէս 1. Դաւիթ Յա-
կոբ 1. Ասատուր Ղազար 2. Գրիգոր
Գալուստեան 5 Ուսուցչական Մանուկ 2. Կա-
րապետ Գրիգոր 1. Յարութիւն Ղա-
զարոս 2. Մարտիկ Յարութիւն 1.
Մարտիրոս Պողոս 2. Պետրոս Պողոսա-

րաւունք ունի՞ք, այլ հին դաշոյն մը
անգամ չեն թողուր որ պահենք:

— Յաւալի բա՛ն... ըսել է թէ պա-
րապ տեղ այս կողմերը գալու որոշում
տուի, նկատել տուաւ երիտասարդը
վշտակիր ձայնով մը:

— Զէ՛, պարապ տեղ չեկար, որ-
դի՛ս, վրայ բերաւ ծերունին՝ իր
խառնադատալի ձեռքը երիտասարդի
ուսերուն տանելով, Աստուած քու
բարի նպատակիդ պիտի հասցունէ քեզ:
Մնացել տունս որչափ որ կը փափա-
քիս: Միայն թէ վստահաբար գիտցիր
որ վատ մարդու մը սեմերէն ներս չես
գտնուիր: Դարեւ մըն ես... ահա՛
զիս քու անձիդ կապող պատճառը:

Երիտասարդը չկրցաւ երախտագի-
տական բառ մը դանել՝ արտայայտե-
լու համար իր հոգին համակող տրա-
մագրութիւնները:

Կէս գիշերն երկու ժամ անցած էր:
Դերունին ոտքի ելաւ եւ երիտա-
սարդը տարաւ ննջատեղեակ մը: Յե-
տոյ «գիշեր բարի» մրմնջալով դուրս
եկաւ:

սար 1. Կիրակոս Մուրատ 1. Լուծ-
ֆիկ Մարգար (սափրիչ) 1. Առաքել
Յակոբ 1. Մանուկ Մարգար 2. Ղու-
կաս Մարտիրոս 1. Գրիգոր Մանուկ
3. Սիմօն Ուսուցչական 1. Մեղրոն Յովհան-
նէս 1. Պողոս Ուստուր 2. Առաքել
Պողոս 2. Ասատուր Սարգիս 1. Սողո-
մոն Յարութիւն 1. Յակոբ Կարա-
պետ 1. Կիւրճիանոս Յարութիւն 1.
Ալլահվերտի Յովհաննէս 1. Սարգիս
Աբրահամ 1. Վարդան Ասատուր 1.
Կարապետ Յովհաննէս 1. Յովհաննէս
Մարտիրոս 1. Կարապետ Մանուկ 1.
Գէորգ Շահինեան 10. Մարտիրոս Կոս-
տանէ 3. Յովհաննէս Եղիազար 2.
Ստեփան Մարկոսեան 2. Սարգիս Ա-
ւետիս 1. Մանուկ Սարգիս 3. Յով-
հաննէս Յովսէփ 5. Մուրատ Բարսեղ
2. Աւետիս Մարկոս 2. Վարդան Սա-
հակ 1. Գէորգ Աւետիս 1. Մարտիրոս
Անդրէաս 2. Գրիգոր Գալուստ 1. Մա-
նուկ Մուրատ 1. Սարգ Զէր Ուստա-
տուր 1. Մկրտիչ Յովհաննէս 1. Միւր-
զո Պիւլպիւլ 1. Դաւիթ Յակոբ 5.
Մուրատ Կարապետ 1. Յակոբ Ստակ-
եան 20. Գէորգ Ուստ 5. Մարտիրոս
Յարութիւն 2. Ուսուցչական Գրիգոր 2.
Ուսուցչական Կարապետ 1. Արմենակ Սիւն-
քերիմ 2. Նշան եւ Գրիգոր Կարապետ-
եան 4. Յարութիւն Ժրհանեան 2.
Գրիգոր Յովհաննէս 1. Սիմօն Ստե-
փան 2. Սարգիս Վարդան 2. Սահակ
Սարգար 2. Թորոս Զարինեան 1.
Յարութիւն Զարինեան 2. Յովհաննէս
Պետրոսեան 30 սաղ. Մարտիրոս Վար-
դան 1. Յարութիւն Երկրորդ 1. Յա-
կոբ Պալի 1. Պողոս Պապիկ 1. Ուսուցչական
Կարապետեան 1. Սկրտիչ Սիւրիս-
եան (երաժիշտ) 2. Յարութիւն Շահ-
րիկեան (պատուավաճառ) 10. Զէյ-
թունցի Սարգիս Փանոսեան 5. Մա-
նուկ Զէր Ուստաւորեան 2. Նիկողոս
Պալքանսքի 2. Յովհաննէս Մարգարեան
(Խանմիդ) 3. Ստեփան Գրիգորեան 2.
Սմբատ Համբարձում 1. Թորոս Մկր-
տիկեան 1. Յովհան Գրիգորեան 4.
Ուստուր Գրիգորեան 2. Ալիքսան
Գրիգորեան 2. Համբարձում Մաղմալ 1.
Արմենակ Էքմէքեան 5. Արտաշէս Էք-
մէքեան 3. Արգար Զէրաբեան (սափ-
րիչ) 5. Գիւրգ Յարութիւն (սափրիչ)
5. Տիկիւն Բերկուհի Ներսիսեան 5.
Ոմն 4. Սարգիս Բարսեղեան 5.

Սուլինայէն ամբողջ հաւաքուած է
696 ֆրանք ոսկեգրամ:

(Շարունակելի)

Երիտասարդը մինակ մնաց:

Փափուկ անկողին մէջ, փուռ տեղ
քնանալու աշխատեցաւ: Սիրտը չա-
փազանց լեցուած էր:

Վերջապէս մինչեւ առաւօտ անքուն
անցուց: Լուսադէմին ծերունին կա-
մաց մը դուռը դարկաւ:

— Մտէ՛ք, ըսաւ երիտասարդը
թրթռուն ձայնով մը:

Մերունին ներս մտաւ:

— Բարի լո՛յս... մրմնջեց հայրա-
կան չնշով մը:

— Աստուած բարի՛ն, պատասխանեց
երիտասարդը:

— Կը խնդրեմ որ այսօր դուրս չել-
նես մինչեւ որ քաղաքէն վերադառ-
նամ, նկատել տուաւ ծերունին:

— Շատ լաւ, վրայ բերաւ երիտա-
սարդը:

Ու ծերունին դուրս եկաւ:

(Շարունակելի)

ՄԵՐ ԹԵՐԹՈՆԸ

Մեր այսօրուան թիւով կը սկը-
սինք նոր թերթօն մը ,

ԹԻԱՊԱՐՏԸ

Հայկական նոր կեանքէ առնուած
ու շատ հետաքրքրական , և որ մեր
անցեալ տարի հրատարակած
ԳՆՈՒՆԻԻ հեղինակին գրչէն հ-
լած է :

ԹԻԱՊԱՐՏԸ գրքի ձեւով չպի-
տի հրատարակենք . ուստի մեր
հետաքրքիր ընթերցողներուն կը
յանձնարարենք որ , անոր ամբող-
ջութիւնը ունենայու համար , պա-
հէն իրենց ստացած թիւերը :

ՀԱՎԱՏԻՍՍԹԸ
ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐԻԻԱ

Շամա սիւրբիւմիւն ունի Յուստ
բաշանըն մուհաքէմէսի Երտըզտա
միւթէնէմիւն տիւմնը հարպտա
րույէթ ունուպ , միւշարիւյն
կէօնա Սուլթանա վէ վաթանա
գարը Սթանպուլա վէ մէմալի-
քին տիկէր թարաֆլարընտա հա-
րիքէթի ֆէսատիյէ հաղըրլամը
օլմագ ճիւրմիւն իլէ միւճրիմ կէօ-
րիւլիւպ , բուլպէլէրիւնտէն իսգաթ
վէ 5 սէնէ գալէպէնտիք ճէգասը-
նա մահքիւմ իտիւմիլ տիր :

Իշպու հիւքմ ըէսմէն Նէշու ու
իւն ունաճաղը կիպի , Պապը Ա-
լիին զաննընճա էվթուրա կաղէ-
թալարը տախի պու իլամ իւզրէ
միւշարիւյն միւճրիմիլէթիւնի
իթիւրաֆ իտէնէլէր իմիլ :

Չաննը աճիւքանէմիլճէ , թէք-
րար իտէրիլ քի , միւշարիւյնի
ճիւրմիւն պաշլընճա ատիլ վէ սէր-
պէսթ մէշրէպիլ ունասը տըր , է-
կէր զատտար վէ միւլթէքիլ օլ-
սաւտը , տահա զիյատէ թէրֆի
մէսլէք իտէր իտի :

— Մուշ վէ Սասունտա ասայիւնի
իպգա իթմէք մէմուրիյէթի իլէ
մախսուսի գոմիւնէր թային օլըն-
մըլ օլան Մէհմետ Ալի բաշա վէ-
ֆաթ իթմիլ օլուպ , անըն եէրիւն
թէվֆիլդ բաշանըն թային օլընա-
ճաղը միւլթիլ տիր , թէվֆիլդ
բաշանըն 1895-96 գըրկընլարընտա
հարէքեաթը զատտարանէսի իլէ
մարուֆ պիր խապիս օլտըղըն էվ-
թուրա ճէրիտէլէրի տախի եազ-
մագտա տըրլար :

— Բէօստէնճէտէն Վիէնայա
վէրիլէն պիր թէլէկրաֆտան ալա-
րագ Նովոէ Վրէմիս նամ բուս կա-
զէթասը՝ սապըգ Մաքէթոնիա
գոմիթէսիւնի ըշիւսի՝ Մ. Պորիս
Սարաֆօղըն՝ շու կիւնլէրտէ Մա-
քէթոնիայա կէշմիլ վէ օրատաքի
գոմիթէլէրին գոմանտասըն էլէ
ալմըլ օլտըղըն եազմըլ տըր :
Ֆազաթ պուկար կազէթալարը պու
հափատիսին Կասսըզ օլտըղըն
սէօլլէրիլ , Միս Սթօնըն աշըրըլ-

մասը մէսլէսիւնի շու աթէշի
սըրաւընտա՝ Մ. Սարաֆօղ Մա-
քէթոնիայա կէշիպտէ ճիւրմի-
քէնտի իւզէրիւնէ ալմագ ճահիլի-
կինտէ պուլընամայաճաղըն իլալէ
իտէրէք , Մ. Սարաֆօղ քէնտի
շախսընա շան ու շէրէֆ գաղան-
մագտան զիյատէ՝ Մաքէթոնիայը
սէվէր վէ պունըն ֆաթիտէսիւնի կէօ-
զէտիր պիր գահրաման . օլտըղըն
պէստ ու պէյան իտէյօրլար :

— Սթանպուլտան Մարտ 7 թա-
րիսի թէլէկրաֆա կէօրէ , Մէք-
քէտէ գօրէլատան էօլէնլէր , Մարտ
1 տէն 4 է գատար 141 քիլի , Ճէ-
ղատա՝ ֆետրվար 26 տան Մարտ
4 է գատար 21 քիլի , Մէտիւնտէ՝
Մարտ 1 տէն 2 է գատար 6 քիլի :

— Հիւճազ վիլայէթիւնտէ գօրէ-
լանըն եաեղմասընա գարըլ թէ-
տապիրի սըհհիյէ իթիթիսաղը ի-
իշիւն Սթանպուլտան թապիպէր ,
էճգաճըլար վէ սայիր սըհհիյէ մէ-
մուրլարըն եօլլանըլմագտա տըր :

— Սթանպուլտան էվթուրայա պիւ-
տիլիտիկիւնէ նազարէն , Բուսիա
էլիսի Սուլթանա զարէթ շէտիտ
պիր լիսան իլէ իշահաթըն պիւ-
թիւն մէմալիքտէ իճրա օլըն-
մասըլ թալէպ իտէրէք , էկէր
հալը հալըր տէվամ իտէնէք օ-
լուր իսէ՝ Աստրիանըն Մակէդո-
նիայա վէ Բուսիանըն էվթիւս-
տանա միւտախէլէ իտէնէլէրիւնի
անլաթմըլ տըր :

Թաւըն Կուսպիլի՝ Մաքէ-
տոնիատա վէ Ալպանիատա ահ-
վալը հաղըրէ սուլշըն թէհիլթէսի-
նի արթըրան պիր ընէկ քէսպ
իթմէքտէ օլտըղըն իլալէ իտէյօր :

— Տէվլէթիւն իանէսի իլէ մէ-
մալիքի էնէպիլիտէ իլիմ թահ-
սիլ իտէն օսմանըլ թալէպէլէրէ
պուլտան սօնրա բարաճա մուա-
վէնէթ օլընմամասըն Սուլթան
էմր ու իրատէ իթմիլ տիր : Պու-
նըն սէպէպի մէշքիւր կէնճէրտէն
պաղըսընըն Բարիս գօնկրէսիւնէ
իշիլիւրագ իթմիլ օլմագ տըր :

Հիւքիւմէթիւն իանէսի իլէ թէտ-
րիս օլընան 70 թալէպէլիւն էքսէ-
րիսի Բարիս վէ Ժընէվ տարիւլ-
ֆիւնուլարընա տէվամ իթմէքտէ
տիրլէր :

— Սթանպուլ ճիւրմընտա Հալ-
քիտէ քեաին պահրիյէ մէքթէ-
պիւնտէն 40 զապիթ եէնիտէն տէր-
տէսթ օլընմըլար : Քէզա պաշգա
ասքէրիյէ վէ միւլթիյէ մէմուրլա-
րընտան բէք չօգ զէվաթ տէրտէսթ
օլընմըլ տըր :

Պուլարըն պիր գըսմընը հա-
միլ պիր վարօր Սթանպուլտան հա-
րէքէթ իթմիլ օլուպ , անըն Պահրը
Ահմէրէ (կարմիր Ծով) կիտէնէկի
րէվայէթ օլընմըլ :

— Բուս սէֆարէթիւնէսիւնի
սէր թէրմիւնը Մ. Մաքսիմօլ
Սօֆիա բուս գօնսօլսըղընա թա-
լին օլընմըլ տըր :

— Կէշէն հաֆթա պիր պուկար
չէթէսի Ճիւմապի Պալատէ թիւրք
ասքէրլէրի իւզէրիւնէ հիւճիւմ իթ-
միլ իտէտէ , շէտիտ պիր միւսա-

տէմէտէն սօնրա կէրի սիւրբիւմիւն
տիր : Պուկարլարտան 2 էօլիւ վէ
պիր գաշ եարէլի տիւշմիւն :

— Բուս սէֆարէթիւնի թալէպի
իւզրէ , Սիւրէտտա բուս մէքթէպ-
լէրիւնի թէհիսիւնի թաստիգ ի-
տէն պիր իրտտէ սուտուր իթմիլ
տիր :

— Յուստ վէ Նազիմ բաշալա-
րըն ալէյհիւն տիւմնը հարպտան
վէրիլէն հիւքիւմէր սէրայտան
թաստիգ օլընմամըլ իտէտէ , մու-
մալէյհիւմնըն սիւրհիւնլիւքտէ
գալմալարը միւնասիպ կէօրիւ-
միւն :

ՏԱԽԻԼԻՑԷ

Ֆերիսաժ . Բրէնս Ֆերտինանտ
հաղըթէթիւրի էվթուրտան Սօֆիա-
յա ալտէթ իթմիլլէր տիր :

— Պուկարիա պօրճլարընըն
1899 սէնէսի գուրնալարը ախիլէն
էօտէնմիլ օլուպ , հիւքիւմէթ մէ-
մուրլարընըն ֆետրուար ալըզլա-
րը տախի էօտէնմէքտէ տիր :

— Սօֆիանըն էսպի եահուտի
սարաֆլարընտան սահիպի սէրվէթ
Մուշոն Լէվի էվթէթի կիւն Սո-
ֆիատա պիր սօգագտա էօլիւ պու-
լընմըլ տըր , թէտգիգաթլէ անլա-
շըլտըր իւզրէ , մէրգուլըն պաշը-
նա աղըր պիր տէմիլլէ վուրուլ-
մուշ :

Մուշոն Լէվի Թարը վագ-
տընտա թիւրքէր իլէ պիր օլուպ ,
չօգ զատտարլըզլար իթմիլ վէ չօգ
Պուկարլարըն ճանըն եազմըլ պիր
Ճըֆըթ օլտըղընտան , խասիւլէրի
թարաֆընտան քէնտիսիւնէ սուհի
գաստ օլընտըր ֆէհմ օլընմըլ :

Ազաժ Սօֆիատան վիւրուտ ի-
տէն Նովիլի կազէթանըն եազտը-
ղընա պիւնէն , խաֆի բօլիւլէր-
թարաֆընտան իճրա օլընտէ թա-
գիպաթըն Նէթիլէսի օլարագ ,
իւշ Մաքէտոնիալը Մուշոն Լէվի-
նիւն գաթիլլէրի օլմագ շիւքէսի
իլէ տէրտէսթ օլընմըլար :

ՍԵՐՊԻԱ

— Պէլկրատտան ալընան սօն
թէլէկրաֆ Մ. Տօթթ . վուիշ
հէյէթի վիւքէլանըն իսթիֆասընը
վէրմիլ օլտըլը պիւտիլիլմիլ
տիր :

— Մէպուսարտան պիր թա-
գըմը , վիւքէլանըն իսթիֆասըն-
տան սօնրա , հիւքիւմէթ մէմուր-
լարընըն տէյիլիլմէսիւնի թէքիթ
իթմիլլէր տիր :

ԲՈՒՍԻԱ

Բէթէրպուրկուտա մէքթէպ թա-
լէպէլէրի եաֆթալար տաղըտըպ ,
քէնտիլէրիւնէ գարըլ հիւքիւմէթիւն
թէգիլիգաթընտան տօլայը , իտարէի
իսթիպատտէլէ , վէ պու պապտէ
կազէթալարըն սիւքիւտիւնէ գարըլ
բրօթէսթ իթմիլլէր տիր : Եէնի
գարըլըրըրար զուհուր իտէնէք
կէօրիւնիյօր :

ԹԻԻՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ , 9 Մարտ

ՉԱԽԻԼԻՑԷ

ՊՈՒՂՏԱՅ			
Վալոն լիպ . 49.53 հքթ . 7.20/ 8. —			
Արապա լիպ . 48-58 հքթ . 8.20/10.80			
ԱՐԲԱ			
Վալոն 100 քիւ	9.70/9.80		
Արապա 35-45 լիպ . հքթ . 6. —/6.60			
ԵՈՒԼԱՅ			
Վալոն 100 քիւ	12.40/ . —		
ՖԱՍՈՒԼԻԱ 100 քիւ	12. —/20. —		
ՉԱՎՏԱՐ	7. —/7.40		
ՄԻՍԻՐ			
Արապա լիպ . 54-58 հքթ . 8. —/8.60			
Վալոն լիպ . 100 քիւ	9.80/10.20		
ՏԱՐԸ	6.20/7. —		
Կիւնտէ 80-100 արապա կէլմէք-			
տէ տիր . վալոն 10-15 .			
Վալոն մուսմէլէսի ալթուն ֆը-			
րանքլէ , արապա կիւմիլլէ : Նարո-			
լէտն 22.50 հիւսպը իլէ :			

ԲԱՄՈՒՔ

Վարնա մաղաղաւորտա իւլիք սա-			
թըլարը :			
Ինկիլիլ իւլիկի Ն . 8-14	9.50		
» » Ն . 18-24	12. —		
Եէլլի իւլիք Ն . 8-14	9. —		
Աթըլմըլ բամուք հօդա	2. —		

ՍԱՐԱՅԻՑԷ

Նաթուլէտն 22 ֆրանք 60 սանթ .
Օսմ . լիւրաք 22.95 ալթուն ֆրանք

ՊԱԳԱԼԻՑԷ

Վարնա բիւսպարտա պագալիլլէ			
մալլէրին պու կիւնքի ֆիլաթը , ալ-			
թուն ֆրանք իլէ :			
ԳԱՂՎԷ	1.50/1.70		
Շէֆէր Նէմէ	51		
» (Գէսմէ) սանտըգ	27.50		
Բիթիւն Ճաթոն չուվալը	35-38		
« Ֆիլիպէ »	33. —		
« Ինկիլիլ »	25. —		
« Բիւքոն »	45. —		
ԿԱՉ Սանտըգ	6.70		
Չէթիւն ԵԱՂԸ քիւ	— .90/— .94		
ԳՈՒՐՈՒ ԻԻՉԻՍ	— .30		

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԴՐԱԼ

Այս գիշեր , Շաբաթ , Ժամը 9ին
թատերասէր երիտասարդաց կողմէ
ի նպատակ ճիկին Պ. Ֆասուլիանի ,
պիտի ներկայացուի «Յուդիթ կամ Սէր
կրօնից եւ Հայրենեաց» անուն ող-
բերուած իւնը , տաճկերէն լեզուա ,
հեղինակութիւն հոգաւար Տասինի :
5 արարուած :

Հայ երիտասարդութիւն

ԿՕՇԻՆԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏ Պ. ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

Փողոց Բրեսլաւսկա , Կիյեֆիկ ղեւը

Այս նորահաստ վաճառատան մէջ
ամեն հասակի տղայաց , կանանց եւ
արանց համար կօշիկներ թէ պատ-
րաստ վրայ կը գտնուին եւ թէ ուզուած
չափի կըլայ կը պատրաստուին գաղ-
ղիական ընտիր ապրանքներէ : Գիշերը
խիստ չափաւոր են : Հաստատուու հա-
մար անգամ մը փորձել հարկ է :

Հայրապէտ Պ. Սարգիսեան

2-4

Одговорникъ Н. Драгулевъ

Печ на Хр. Н. Войниковъ—Варна